-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ

ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

N 16/12

Քաղ. Երեւան 29 օգոստոսի 2012թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ նաեւ բողոքարկման խորհուրդ) հետեւյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Ա.Ա.Տոնիկյան, Ա. Վ. Բաբայան, Ա.Գ. Շահինյան և Ա. Ի.Ղարիբջանյան (քարտուղար) իր 2012թ. օգոստոսի 29-ի նիստում (արձանագրություն N 5.5) քննարկեց «Էրքան Էմեն» ընկերության ներկայացուցիչ Է. Նահապետյանի կողմից 2012թ. հուլիսի 31-ին ներկայացված (հայտի համարը 20110992) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փորձաքննության որոշման դեմ բողոքը:

Մերժման հիմք են հանդիսացել «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը և 2-րդ մասի 1-ին կետի «բ» ենթակետը և «Ապրանքային նշանների հայտերը լրացնելու, ներկայացնելու և քննարկելու» կարգի 87–րդ մասի 2–րդ կետի «ա» ենթակետը, համաձայն որոնց որպես ապրանքային նշան գրանցման ենթակա չէ այն նիշը, որը նույնական կամ նման է ավելի վաղ ապրանքային նշանին, և դրանով մակնշվող ապրանքների և (կամ) ծառայությունների նույնական կամ նույնատիպ լինելը հանրության մոտ շփոթություն առաջացնելու վտանգ է պարունակում, ներառյալ՝ ավելի վաղ ապրանքային նշանին զուգորդվելը: «SOCCER» բառային ապրանքային նշանը չի գրանցվել, քանի որ այն շփոթելու աստիճան նման է միջազգային գրանցման հիման վրա Հայաստանի Հանրապետության տարածքում պահպանվող «SOCCERADE» (Soccerade Ireland Limited, Third Floor, Ulisses House, Foley Street, Dublin 1 (IE), IR 913817) ապրանքային նշանին: Հակադրված ապրանքային նշանը իր մեջ ներառում է հայտարկված «SOCCER» ապրանքային նշանը:

Բողոքարկողը համաձայն չէ փորձաքննության որոշման հետ և իր բողոքում բերել է ստորև նշված փաստարկները:

Բողոքարկողը պնդում է, որ հակադրված նշանի իրավատեր «Soccerade Ireland Limited» ընկերությունը հիմնականում զբաղվում է ըմպելիքների, մասնավորապես, լեպպին-ով հարստացված ըմպելիքների արտադրությամբ, ինչի մասին վկայում է այդ ընկերության http://soccerade.com/company կայքից վերցված տեղեկատվությունը: Նշված է նաև, որ չնայած այդ ընկերությունը իր նշանը բացի դաս 32-ից գրանցել է նաեւ դաս 25-ին պատկանող ապրանքների համար, սակայն լայնորեն օգտագործում է իր նշանը դաս 32-ում և, հավանաբար, դաս 25-ում հենց այդ ըմպելիքները գովազդելու նպատակով, քանի որ համացանցից վերցված տեղեկատվության համաձայն չի գտնվել այդ 25-րդ դասին վերաբերող ապրանք՝ «SOCCERADE» ապրանքային նշանով մակնշված:

Զարգացնելով իր միտքը՝ բողոքարկողը նշում է, որ հակադրված «SOCCERADE» նշանը գրանցված է 25-րդ եւ 32-րդ դասերի համար, իսկ բողոքարկված «SOCCER» նշանը հայտարկվել է 25-րդ եւ 35-րդ դասերի ապրանքների համար: Համընկնում են միայն դաս 25-ի ապրանքները, որոնց նկատմամբ համեմատվող նշանները ունեն բարձր տարբերակիչ հատկանիշ եւ շփոթության աստիճանի նման չեն իրար: Բողոքում նշված է, որ ինչ վերաբերում է դաս 35-ի ապրանքների համար, ապա բողոքարկողը հայտարկել է իր նշանը այդ դասի բոլոր ծառայությունների համար, այն է «Գովազդ, գործերի կառավարում գործարարության ասպարեզում. վարչարարական գործունեությունն գործարարության ասպարեզում, գրասենյակային ծառայություններ»: Եվ այդ ծառայությունները նույնական կամ նույնատիպ չեն դաս 25-ի ապրանքներին եւ չեն ընդգրկված դաս 25-ում: Բողոքարկողը գտնում է, որ այս դեպքում առկա չեն փոխաքննության մերժման հիմքերը:

Նշված է նաեւ, որ հակադրված նշանի իրավատեր Soccerade Ireland Limited ընկերությունը տրամադրել է հայտատուին նամակ–համաձայնագիր, որով նա տալիս է իր համաձայնությունը հայտատու «Էրքան էմենին» ընկերությանը Հայաստանում N 20110992 հայտով «SOCCER» ապրանքային նշանը 25-րդ եւ 35-րդ դասերում գրանցելու եւ օգտագործելու համար:

Բողոքարկողը խնդրում է հաշվի առնել նշված փաստարկները և վերանայել կրկնական փոխաքննության որոշումը՝ գրանցելով N 20110992 հայտով «SOCCER» ապրանքային նշանը Հայաստանի Հանրապետության տարածքում 25-րդ եւ 35-րդ դասերում խնդրարկված ապրանքների համար:

Կոլեգիայի անդամը՝ բողոքը ներկայացնելիս նշեց, որ 2012թ. հուլիսի 31-ին «Էրքան Էմեն» ընկերության կողմից ներկայացվել է (հայտի համարը N 20110992) բառային ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին կրկնական փոխաքննության որոշման դեմ բողոք: Համառոտ ներկայացվեց ապրանքային նշանի գրանցումը մերժելու մասին հիմքերը, ինչպես նաև բողոքի համառոտ բովանդակությունը, նշվեց նաև, որ բողոքին կից ներկայացված է նամակ

համաձայնագիր, որով հակադրված նշանի իրավատերը տալիս է իր համաձայնությունը «SOCCER» ապրանքային նշանը (հայտի համար N 20110992) 25-րդ և 35-րդ դասերում խնդրարկված բոլոր ապրանքների համար գրանցելու:

Կոլեգիայի անդամը նշեց, որ հիմք ընդունելով այդ համաձայնագիրը և «Ապրանքային նշանների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ կետը ապրանքային նշանը կարելի է գրանցել:

«Ընդհանուր քննարկման արդյունքում, ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների եւ դիմումների ներկայացման եւ քննարկման կարգի» 68-րդ կետի 1-ին ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բողոքը ամբողջությամբ բավարարել, ապրանքային նշանի նախնական մերժման մասին Գործակալության 13.04.2012թ. և կրկնական փորձաքննության՝ 27.04.2012թ. որոշումները չեղյալ ճանաչել և գրանցել «Էրքան Էմեն» ընկերության «SOCCER» N 20110992 բառային ապրանքային նշանը հայտարկված ապրանքների համար:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա. Ազիզյան